ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Վարուժան Գեղամյան

Համացանցի զարգացմանն ու օրավուր տարածմանը զուգահեռ, հեռուստատեսությունն աշխարհի շատ երկրներում տեղեկատվության առաջնային աղբյուր է մնում: Բացառություն չէ նաև Ադրբեջանը: Դիտարկենք վիճակագրությունը. 2005թ. ԵԱՀԿ Մամուլի ազատության ներկայացուցիչների զեկույցում նշվում է, որ մայրաքաղաք Բաքվում բնակչության 83%-ը, իսկ շրջաններում՝ 93%-ը հեռուստատեսությունը դիտարկում է որպես տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր[1]: Իսկ *Internet World Stat*-ի տվյալների համաձայն՝ Ադրբեջանում համացանցից օգտվողների թիվը կազմում է ընդհանուր բնակչության շուրջ 25%-ը[2]: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ բնակչության մնացած մասը տեղեկատվության հիմնական աղբյուր է դիտարկում հեռուստատեսությունը (հաշվի առնելով նաև այն, որ Ադրբեջանում թերթերի և ամսագրերի մեծ մասը լույս է տեսնում մայրաքաղաք Բաքվում և անհասանելի է շրջաններում ապրող բնակչությանը): Տեղին է նաև նշել, որ ԱՄՆ Պետդեպարտամենտի 2009թ. անցկացրած սոցհարցումների տվյալների համաձայն հարցվածները իրենց պատասխաններում որպես տեղեկատվություն ստանալու գլխավոր աղբյուր առաջին 8-ը նշել են հեռուստատեսություններ, որոնցից 6-ը ադրբեջանական[3]:

Այսպիսով, հակահայկական քարոզչության գլխավոր զենքերից մեկն ադրբեջանական հեռուստատեսությունն է, որի թիրախային հիմնական խումբը ներքին լսարանն է: Սակայն կան նաև նոր միտումներ, և այդ առումով հիշատակության արժանի է նոր բացված *ATV International* հեռուստաալիքը, որն ունի քառալեզու, ներառյալ՝ հայերենը, ամենօրյա լրատվական թողարկումներ:

Սակայն մինչև այժմ չկա որևէ ուսումնասիրություն այս ոլորտում, որից հնարավոր լիներ նվազագույն տվյալներ ստանալ ադրբեջանական հեռուստաալիքների, դրանց գործունեության, կիրառած քարոզչական (հատկապես հակահայկական) թեզերի և մեթոդների վերաբերյալ:

Սույն աշխատանքով փորձել ենք զուտ փաստական տվյալներ տալ Ադրբեջանի Հանրապետությունում գործող հեռուստաալիքների և դրանց գործունեության վերաբերյալ:

Նախ փորձենք համառոտ տեղեկություններ տալ Ադրբեջանի հեռուստատեսային ոլորտում ձևավորված իրավիճակի մասին: Չանդրադառնալով խորհրդային ժամանակաշրջանի պատմությանը՝ ուղղակի նշենք, որ 1956թ. փետրվարին՝ Բաքվի հեռուստաաշտարակի կառուցումից երկու տարի անց, սկսեց գործել ադրբեջանական հեռուստատեսությունը: Այն, բնականաբար, հիմնական բնութագրերով նման էր միութենական մյուս երկրների հեռուստատեսություններին:

1991թ. հետո Ադրբեջանում սկսեցին բացվել նոր հեռուստաընկերություններ: 2009թ. աշնան տվյալներով՝ Ադրբեջանի Արդարադատության նախարարությունում գրանցված է շուրջ 4000 անուն ԶԼՄ, այդ թվում՝ 17 ռադիոկայան, 8 հանրապետական, 14 տեղական և 13 կաբելային հեռուստաընկերություն:

Առհասարակ, Ադրբեջանի ԶԼՄ-ն կարգավորվում է «ԶԼՄ-ի մասին» օրենքով, իսկ մասնավորապես հեռուստատեսության ոլորտը՝ 2002թ. ընդունված «Ռադիո- և հեռուստաթերթերի մասին» օրենքով: 2003թ. հեռուստատեսության քաղաքականությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդը: Նշենք նաև, որ 2008թ. հաստատվեց «Ադրբեջանի Հանրապետությունում ԶԼՄ զարգացման աջակցման պետական հայեցակարգը», որի շրջանակներում էլ 2009թ. Ադրբեջանի նախագահին կից ստեղծվեց ԶԼՄ զարգացման աջակցության պետական հիմնադրամը, որը անցյալ տարի շուրջ մեկ միլիոն մանաթ (համարժեք է $1 250 000-ին) է տրամադրել շուրջ յոթ տասնյակ ԶԼՄ ծրագրերի[4]:

---

[1] http://www.osce.org/documents/html/pdftohtml/15783_en.pdf.html
[2] http://www.internetworldstats.com/stats3.htm
[3] http://www.regnum.ru/news/1283074.html?forprint
[4] http://www.zerkalo.az/2010-02-11/short-news/6987-smi-vugarsafarli-gospodderjka

Ադրբեջանի Սահմանադրությունը երաշխավորում է խոսքի ազատությունը, սակայն գործնականում իրավիճակն այլ է: Բազմաթիվ են դեպքերը, երբ փակվել են թերթեր, հրատարակություններ, անգամ ռադիոկայաններ և հեռուստաընկերություններ[5]:

Միջազգային ամենատարբեր կառույցներ շարունակաբար անդրադառնում են Ադրբեջանում խոսքի ազատության սահմանափակումներին և հանդես գալիս լուրջ քննադատություններով: 2006թ. վերջին *ANS (Azerbaijan News Servic*e) մասնավոր հեռուստաընկերության ժամանակավոր փակումը մեծ արձագանք գտավ: ԵԱՀԿ Բաքվի գրասենյակը հայտարարեց, որ *ANS* հեռուստաընկերությունն ամենաօբյեկտիվն է Ադրբեջանում: Հեռուստաընկերության փակման մասին որոշումը վերանայելու կոչով հանդես եկան նաև Ադրբեջանում ԱՄՆ դեսպանությունը, ԵՄ-ը, «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը և տեղական ու միջազգային այլ ուժեր[6]: Արդյունքում՝ մոտ մեկ ամիս անց նախագահ Իլհամ Ալիևի հատուկ թույլտվությամբ հեռուստակայանը վերաբացվեց:

Հիշեցնենք նաև, որ 2008թ. դեկտեմբերին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդն արգելեց արտերկրյա ռադիոընկերությունների հեռարձակումը *FM* ծածկույթում, որի արդյունքում փակվեցին այնպիսի ռադիոընկերություններ, ինչպիսիք են Բի-Բի-Սին, «Ազատություն» և «Ամերիկայի ձայն» ռադիոկայանները: Սա ևս արժանցավ մեծ քննադատության[7]:

Վերոնշյալի համատեքստում է ծավալվում հեռուստաընկերությունների գործունեությունը: Հեռուստա- և ռադիոընկերություններին եթերի արտոնագրեր է տրամադրում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդը, որի նախագահն է Նուշիրվան Մագերամլին:

Ադրբեջանում գործող հանրապետական նշանակության 8 հեռուստաընկերությունների մասին տե՛ս *Աղյուսակ 1-ում.*

Ադրբեջանական հանրապետական նշանակության բոլոր 8 հեռուստաալիքների եթերում պարտադիր են լրատվական թողարկումները: Ուստի, ավելորդ չենք համարում նաև նշել վերոհիշյալ հեռուստաալիքներով հեռարձակվող լրատվական ծրագրերը *(տե՛ս Աղյուսակ 2):* Դրանք եթեր են հեռարձակվում օրական մի քանի անգամ: Այսպես, *AZ TV* պետական հեռուստատեսության հեռարձակումներում աշխատանքային օրերին լրատվական թողարկումներին բաժին է ընկնում եթերի 205 րոպեն. ընդ որում, ադրբեջաներեն լուրեր (160 րոպե), ռուսերեն (15 րոպե), անգլերեն (30 րոպե): Իսկ *Ictimai TV* հանրային հեռուստատեսությամբ լսարանին մատուցվող լրատվության համար տրամադրվում է ընդհանուր 180 րոպե, այդ թվում՝ լուրեր ադրբեջաներենով (165 րոպե) և ռուսերեն (15 րոպե): *ANS* հեռուստատեսության լրատվական փաթեթը զբաղեցնում է եթերի 145 րոպեն: Ամենաշատ լսարան ունեցող հեռուստաընկերություններից *Lider TV*-ն լրատվության համար տրամադրում է իր 24-ժամյա եթերի 165 րոպեն: Բոլոր հեռուստաընկերությունները շաբաթվա վերջում ունեն վերլուծական-լրատվական հաղորդում, որի ընթացքում անդրադարձ է կատարվում շաբաթվա ընթացքում տեղի ունեցած իրադարձություններին: Ավելորդ չէ նշել, որ ԱՄՆ Պետդեպարտամենտի սոցհարցումների համաձայն *ANS TV* որպես տեղեկատվության հիմնական աղբյուր նշել է հարցվածների մեծամասնությունը՝ 70.6%-ը[8]:

---

[5] http://www.hrw.org/ru/world-report-2010-8,
http://www.memo.ru/hr/hotpoints/caucas1/msg/2007/01/m79817.htm

[6] http://www.rferl.org/content/article/1073092.html, http://www.day.az/news/politics/64608.html,
http://www.day.az/news/politics/64710.html, http://www.day.az/news/politics/64654.html
http://www.day.az/news/politics/64575.html

[7] http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7806000/7806029.stm

[8] http://www.regnum.ru/news/1283074.html?forprint

Աղյուսակ 1[9]

Հեռուստա-ընկերություն	Տարբերա-նշան	Ստեղծ-ման տարեթիվը	Հեռարձակման լեզուն	Առկախ *(online)* համացանցային տարբերակ	Վեբ-կայքը	Կարգավի-ճակը	Արբանյակային հեռարձակում
Azerbaycan Televizyasi (AzTV)	Az TV	1956	ադրբեջաներեն	ունի	http://www.aztv.az	պետական հ/ը	ունի
Ictimai (ITV)	İctimai	2005	ադրբ.- 80% այլ – 20%	ունի	http://www.itv.az	հանրային հ/ը	ունի
Azerbaijan News Service (ANS)	Ans TV	1991	ադրբ. – 84.1% այլ - 15.9%	չունի	http://www.anstv.ws	մասնավոր հ/ը	ունի
"Azad Azərbaycan" Televiziyası (ATV)	Azad TV	2002	ադրբեջաներեն	չունի	http://www.atv.az	մասնավոր հ/ը	ունի
Lider TV	Lider TV	1999-2000	ադրբ. – 80% այլ - 20%	ունի	http://www.lidertv.com	մասնավոր հ/ը	ունի
Space TV	Space	1997	ադրբ. – 90% այլ - 10%	չունի	http://www.spacetv.az	մասնավոր հ/ը	ունի
Xəzər Televiziyası	Xazar	2007	ադրբ. – 90% այլ - 10%	չունի	http://www.xazar.tv	մասնավոր հ/ը	ունի
"İdman Azərbaycan" Televiziyası (մարզական ալիք)		2009	ադրբեջաներեն	չունի	http://aztv.az/idman.html	պետական հ/ը մաս	ունի

[9] Աղյուսակում ներկայացված տվյալները բերված են ըստ Ադրբեջանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհրդի պաշտոնական կայքի՝ http://www.ntrc.gov.az/?/az/content/226/

Աղյուսակ 2

Հեռուստա-ընկերություն **Օրեր**	Az TV	İctimai	Ans TV	Azad TV	Lider TV	Space
Երկուշաբթի	08:00, 11:00, 14:00,17:00, 20:00, 00:00 – “Xeberler” (Լուրեր) 18:00 – Xeberler (ռուսերեն) 02:00 - Xeberler (անգլերեն)	08:00, 12:00, 17:00, 20:00, 23:00 – “Carçı” լրատվական թողարկում 14:00 - “Carçı” լրատվական թողարկում ռուսերեն	12:00, 15:00, 18:00, 21:00, 00:00 - Xəbərçi (Բանբեր) 15:30, 23:00 – Ներքին լուրեր	09:00, 14:00, 20:30 – Son Xeber (Վերջին լուրեր)	09:00, 13:00, 19:00, 00:00 – Seda (ՁԱՅՆ) լրատվական ծրագիր 19:45 – Seda+	9:00, 13:00, 17:00, 20:30 – “Her Gun” (Ամեն օր)
Երեքշաբթի	08:00, 11:00, 14:00,17:00, 20:00, 00:00 – “Xeberler” (Լուրեր) 18:00 – Xeberler (ռուսերեն) 02:00 - Xeberler (անգլերեն)	08:00, 12:00, 17:00, 20:00, 23:00 – “Carçı” լրատվական թողարկում 14:00 - “Carçı” լրատվական թողարկում ռուսերեն	12:00, 15:00, 18:00, 21:00, 00:00 - Xəbərçi (Բանբեր) 15:30, 23:00 – Ներքին լուրեր	09:00, 14:00, 20:30 – Son Xeber (Վերջին լուրեր)	09:00, 13:00, 19:00, 00:00 – Seda (ՁԱՅՆ) լրատվական ծրագիր 19:45 – Seda+	9:00, 13:00, 17:00, 20:30 – “Her Gun” (Ամեն օր)
Չորեքշաբթի	08:00, 11:00, 14:00,17:00, 20:00, 00:00 – “Xeberler” (Լուրեր) 18:00 – Xeberler (ռուսերեն) 02:00 - Xeberler (անգլերեն)	08:00, 12:00, 17:00, 20:00, 23:00 – “Carçı” լրատվական թողարկում 14:00 - “Carçı” լրատվական թողարկում ռուսերեն	12:00, 15:00, 18:00, 21:00, 00:00 - Xəbərçi (Բանբեր) 15:30, 23:00 – Ներքին լուրեր	09:00, 14:00, 20:30 – Son Xeber (Վերջին լուրեր)	09:00, 13:00, 19:00, 00:00 – Seda (ՁԱՅՆ) լրատվական ծրագիր 19:45 – Seda+	9:00, 13:00, 17:00, 20:30 – “Her Gun” (Ամեն օր)
Հինգշաբթի	08:00, 11:00, 14:00,17:00, 20:00, 00:00 – “Xeberler” (Լուրեր) 18:00 – Xeberler (ռուսերեն) 02:00 - Xeberler (անգլերեն)	08:00, 12:00, 17:00, 20:00, 23:00 – “Carçı” լրատվական թողարկում 14:00 - “Carçı” լրատվական թողարկում ռուսերեն	12:00, 15:00, 18:00, 21:00, 00:00 - Xəbərçi (Բանբեր) 15:30, 23:00 – Ներքին լուրեր	09:00, 14:00, 20:30 – Son Xeber (Վերջին լուրեր)	09:00, 13:00, 19:00, 00:00 – Seda (ՁԱՅՆ) լրատվական ծրագիր 19:45 – Seda+	9:00, 13:00, 17:00, 20:30 – “Her Gun” (Ամեն օր)

Ուրբաթ	08:00, 11:00, 14:00,17:00, 20:00, 00:00 – “Xeberler” (Լուրեր) 18:00 – Xeberler (ռուսերեն) 02:00 - Xeberler (անգլերեն)	08:00, 12:00, 17:00, 20:00, 23:00 – “Carçı” լրատվական թողարկում 14:00 - “Carçı” լրատվական թողարկում ռուսերեն	12:00, 15:00, 18:00, 21:00, 00:00 - Xəbərçi (Բանբեր) 15:30, 23:00 – Ներքին լուրեր	09:00, 14:00, 20:30 – Son Xeber (Վերջին լուրեր)	09:00, 13:00, 19:00, 00:00 – Seda (ԶԱՅՆ) լրատվական ծրագիր 19:45 – Seda+	9:00, 13:00, 17:00, 20:30 – “Her Gun” (Ամեն օր)
Շաբաթ	08:00, 11:00, 14:00,17:00, 20:00, 00:00 – “Xeberler” (Լուրեր) 18:00 – Xeberler (ռուսերեն) 02:00 - Xeberler (անգլերեն)	08:00, 12:00, 17:00, 20:00, 23:00 – “Carçı” լրատվական թողարկում 14:00 - “Carçı” լրատվական թողարկում ռուսերեն	12:00, 15:00, 18:00, 21:00, 00:00 - Xəbərçi (Բանբեր) 15:30, 23:00 – Ներքին լուրեր	09:00, 14:00, 20:30 – Son Xeber (Վերջին լուրեր)	13:00- Seda 19:00 –Seda Hafta (շաբաթվա ամփո-փում)	9:00, 13:00, 17:00, 20:30 – “Her Gun” (Ամեն օր) 19:30 – «Քաղաքա-կրթության ժամը» ինֆորմացիոն հաղորդում
Կիրակի	11:00 – Շաբաթվա համայնապատկեր (անգլերեն) 12:00 – Ծառայում եմ Ադրբեջանի Հանրապետությանը 14:00 – Xeberler 20:00 – Hevte (Շաբաթ) վերլուծական ինֆորմացիոն ծրագիր	12:00, 17:00 - “Carçı” լրատվական թողարկում 20:00 – “Yekun”(“Ամփոփում”) վերլուծական ծրագիր	12:00, 15:00, 18:00 - Xəbərçi (Բանբեր) 21:00 – Hesabat լրատվական թողարկում	20:00 – Xefte sonu (Շաբաթվա վերջ)		20:00 – «Ամեն շաբաթ» վերլուծական ծրագիր

Բացի վերը նշված հանրապետական նշանակության 8 հեռուստաընկերություններից, Ադրբեջանում գործում են նաև շրջանային հեռուսաընկերություններ *(տե՛ս Աղյուսակ 3)*:

Աղյուսակ 3

Հեռուստաընկերություն/ կայքը	Քաղաք/շրջան	Ստեղծման տարեթիվը
"Alternativ" TV (Ալտերնատիվ)	Գյանջա	2001
"Kəpəz"(Կյեփեզ) http://kapaz.tv/	Գյանջա	1993
"Aygün" TV (Այգուն)	Զաքաթալայի շրջան	1996
"Dünya" (Դյունյա)	Սումգայիթ	1998
"Xəyal" (Խեյել)	Ղուբա	1998
Qütb (Գյութբ)	Ղուբա	1995
"Cənub TV" (Ջանուբ)	Լենքորան/Ջանուբի շրջան	2006
"Mingəçevir" (Մինգեչաուր)	Մինգեչաուր	1998
"Simurq M" (Սիմուրգ)	Թովուզ	1998
"Kanal-S" ՍՊԸ	Շաքի	2006
"RTV"	Խաչվազի շրջան	2006
"EL" TV	Եվլախ	2006
Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդ	Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն	1963
"Kanal 35" http://www.kanal35.tv	Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն	2004

Հանրապետական նշանակության և շրջանային հեռուստաընկերություններից բացի, Ադրբեջանում հեռարձակման իրավունք ունի նաև թուրքական *TRT1* հեռուստաալիքը (1995-ից ի վեր): Հիշեցնենք, որ 2007թ. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհրդի որոշմամբ Ադրբեջանի տարածքում արգելվեց ռուսական և թուրքական հեռուստաընկերությունների հեռարձակումը:

Թուրքական և ռուսական հեռուստաալիքների հեռարձակման դադարեցումից հետո Ադրբեջանում ծաղկեց արբանյակային ալեհավաքների վաճառքը[10]:

Վերոհիշյալ որոշման արդյունքում բավական արագ զարգացում ապրեց նաև կաբելային հեռուստատեսությունը: Կաբելային հեռուստաընկերությունները եթեր են հեռարձակում հաղորդումներ, որոնցում միջինը 10%-ը կազմում են ադրբեջանական, իսկ մնացած գերակշռող մասը՝ արտասահմանյան արտադրության հաղորդումները: Ուշագրավ է, որ կաբելային հեռուստատեսության հնարավորություն ունեցող հեռուստադիտողների միայն 34%-ն է դիտում տեղական ալիքներ: Փաստորեն, ադրբեջանցիները, հատկապես մայրաքաղաք Բաքվում, գերադասում են դիտել կաբելային կամ էլ արբանյակային հեռուստատեսություն: Այնպես որ, սովորական երևույթ է դարձել Բաքուն սպիտակ արբանյակային ալեհավաքներով ծածկված տեսնելը:

Այսպիսով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհրդում գրանցված կաբելային հեռուստաընկերությունները ներառված են *Աղյուսակ 4-ում*:

[10] http://www.rian.ru/analytics/20070718/69193125.html

Հեռուստաընկերություն/ կայք	Քաղաք/շրջան	Ստեղծման տարեթիվը
"Baku and Boston TV Communication" ՍՊԸ	Բաքվի շրջան	1997
"AG Telekom" ՍՊԸ	Բաքվի շրջան	2006
"Neptun" ընկերություն	Բաքվի շրջան	2006
"FARAON-1" ՍՊԸ	Բաքվի շրջան	2001
"DİGİCOM" ՍՊԸ	Բաքվի շրջան	2006
"Sky" ՍՊԸ	Բաքվի շրջան	2006
"Qlobal Telecom" ՍՊԸ	Բաքվի շրջան	2002
"SN Telekom" ՍՊԸ	Բաքվի շրջան	2006
"SKY MAX" ՍՊԸ	Բաքվի շրջան	2007
"AzHİNet" (Azerbaijan Home Information Networks) ՍՊԸ	Բաքվի շրջան	2006
"AN Media" ՍՊԸ	Բաքվի շրջան	2006
"Azad Azərbaycan" (ATV-ի դուստր ընկերություն) http://www.azadazerbaijan.com	-	2007
"Şam" ՍՊԸ	Բաքվի շրջան	2004

Ադրբեջանական հեռուստաալիքների մոնիթորինգով զբաղվել են մի շարք կազմակերպություններ, որոնցից հարկ է առանձնացնել *SIAR* և *AGB Nielsen Media Research* կազմակերպությունները: Համաձայն *SIAR*-ի կատարած հետազոտությունների, Ադրբեջանում հեռուստացույց դիտողների հիմնական տարիքային խումբն ընդգրկում է 55-64 տարեկան հեռուստադիտողներին, որին հաջորդում է 35-44 տարեկանների խումբը: Հեռուստածրագրերում գերակշռում են ժամանցային հաղորդաշարերն ու հեռուստասերիալները: Ազգային ինտերնետ ֆորումի նախագահ Օսման Գյունդուզը նշում է, որ ադրբեջանական հեռուստատեսային եթերի 99%-ը կազմում են ժամանցային հաղորդումները: Ընդ որում, առավել մեծ լսարան ունեն քրեական հաղորդաշարերն ու շոու ծրագրերը, ապա հեռուստատեսային սերիալներն ու հումորային հաղորդաշարերը[11]:

Տիրող վիճակի քննադատությամբ 2009թ. աշնանը հանդես եկավ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևը: Նա անվանապես նշեց մի քանի հաղորդաշար, որոնք, նրա խոսքերով, «ապականում են եթերը»[12]:

Այս քննադատությունից հետո ադրբեջանական հեռուստաընկերությունների եթերում տեղի ունեցան աննշան փոփոխություններ, որոշ հաղորդումներ հանվեցին եթերից, սակայն այս տարի կրկին աճել են սկանդալային բնույթի ժամանցային ծրագրերը, եթերում գերակայում է կենցաղային մակարդակի լեզուն[13]:

Այս տարվա ապրիլին Հեռուստառադիոյի ազգային խորհուրդը հայտարարեց, որ կբացվի ադրբեջանական *«Культура»* հեռուստաալիքը, որի համար մրցույթ կհայտարարվի ամռանը: Խորհուրդն այս հեռուստաընկերության հիմնադրումը հիմնավորում է այն մեծ բացթողումների և թերությունների առկայությամբ, որ կա հեռուստատեսության ոլորտում[14]:

Վերջին տարիներին հատկապես ուշադրություն է դարձվում համացանցային հեռուստատեսության զարգացմանը: Այսպես, ինչպես երևում է *Աղյուսակ 1-ից,* հանրապետական նշանակություն ունեցող հեռուստաընկերություններից 3-ն ունեն իրենց համացանցային առկախ *(on-line)* տարբերակները[15]:

Սակայն այսքանով չի սահմանափակվում համացանցում գործող ադրբեջանական

[11] http://www.apa.az/en/print.php?id=98356
[12] http://www.azertag.com/store/News/Politics/EFIRNOE%20PROSTRANSTVO.doc
[13] http://ru.apa.az/news_Нуширеван_Магеррамли:_«Проведенные_НСТР__160631.html
[14] http://vesti.az/news.php?id=37506
[15] http://tv-online-channels.com/online-tv/Azerbaijan-tv-channels-98.html

հեռուստաալիքների թիվը: Արդեն մի քանի տարի է՝ Իրանում գործում է *Tabriz TV*-ն, որի հիմնական լսարանը հյուսիսարևմտյան Իրանի ադրբեջանախոս բնակիչներն են: *Tabriz TV*-ն հիմնականում ժամանցային բնույթի ալիք է:

Հավելենք նաև, որ այս տարվա սկզբին Թուրքիայում ադրբեջանցիների նախաձեռնությամբ բացվեց *CanAz (Can Azerbaycan)* ինտերնետ *TV*-ն, որի հեռարձակման լեզուն ադրբեջաներենն է:

Կան հեռուստաալիքներ, որոնք գործում են արտասահմանում: Բավական երկար ժամանակ Ռուսաստանում գործում է ադրբեջաներեն լեզվով (կան նաև հաղորդումներ ռուսերեն և անգլերեն) հեռարձակվող *«ИнтерАз» ТВ*-ն: Այն հիմնադրվել է 2002թ.՝ նպատակ ունենալով համախմբել Ռուսաստանի Դաշնության տարածքում բնակվող ադրբեջանցիներին, պատմել և ծանոթացնել Ադրբեջանի պատմությանը, մշակույթին, ինչպես նաև ժամանակին ապահովել տեղեկատվություն Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Նշենք, որ 2007թ. հունիսին հեռուստաընկերության նախագահ Սալիխ Խուդիևի դեմ մահափորձ էր կատարվել Մոսկվայում, շատերը դա կապում էին հեռուստաընկերության գործունեության հետ: Ընդամենը մեկ ամիս անց՝ հուլիսին, հեռուստաընկերությունը դադարեցրել էր գործունեությունը: Նախագահի խոսքերով, տարբեր բիզնես և քաղաքական ուժեր նրան անընդհատ համոզում են վաճառել ընկերության բաժնետոմսերը, սակայն ինքը մերժել է դրանք, իսկ ստեղծված ծանր պայմանները հանգեցրել են ֆինանսական ճգնաժամի, և հեռարձակումը դադարեցվել է: 2007թ. դեկտեմբերին ընկերությունը վերականգնեց գործունեությունը և այժմ, արբանյակային ալիք լինելով, հեռարձակվում է ՌԴ-ում և մերձավորարևելյան երկրներում:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև *Gunaz (Guney Azerbaycan* – Հարավային Ադրբեջան) *TV*-ն, որը հեռարձակվում է Չիկագոյից և բավական մեծ լսարան ունի: Արդեն անվանումից պարզ է, որ հեռուստաընկերության թիրախային լսարանը, այսպես կոչված, «Հարավային Ադրբեջանի» բնակչությունն է: Ադրբեջանը հավակնություններ է ցուցաբերում Իրանի հյուսիսարևմտյան շրջանների նկատմամբ որպես «պատմական Ադրբեջանի տարածքներ»[16] և փորձում է որոշակի ազդեցություն ձեռք բերել այդտեղ բնակվող ադրբեջանա-խոս բնակչության վրա: Այն հեռուստադիտողին է ներկայացնում ադրբեջաներենով ամենաբազմազան հաղորդումներ և լրատվություն: Իսկ կայքում կա առանձին պարսկերեն հարուստ բաժին, որը կրկին հստակ քարոզչական նպատակ է հետապնդում:

Եվ վերջում անհրաժեշտ է նաև անդրադառնալ ադրբեջանական միջազգային հեռուստաալիքին `*ATV (Azad Azerbaycan* - Ազատ Ադրբեջան) *Internatioanal*-ին: Այն աշխատանքն սկսել է 2009թ. հոկտեմբերի 5-ից: Համաձայն *ATV* հեռուստաընկերության (որի դուստր ընկերությունն է համարվում *ATV International*-ը) փոխնախագահ Նաթիգ Իբրահիմովի խոսքերի՝ «հեռարձակվելու են նորություններ վեց լեզվով, այդ թվում և հայերեն, որի միակ նպատակը հօգուտ Ադրբեջանի քարոզչություն անելն է տարբեր լսարաններում»[17]:

Ադրբեջանը՝ ԼՂՀ-ին սահմանակից որոշ շրջաններում ադրբեջանցի հեռուստադիտողները հնարավորություն ունեն դիտելու նաև ՀՀ և ԼՂՀ որոշ հեռուստաալիքներ:

Ամփոփելով նշենք, որ հայ-ադրբեջանական հակամարտության տեսանկյունից անգամ ամենապարզ դիտարկումները ցույց են տալիս, որ ադրբեջանական հեռուստատեսությամբ տարվող քարոզչությունը հիմնական թիրախային խումբ է դիտարկում իր երկրի բնակչությանը՝ հաշվի առնելով քարոզչության լեզուն (մեծ մասամբ՝ ադրբեջաներեն), անընդհատ կրկնվող թեզերը:

Անշուշտ, հայ-ադրբեջանական հակամարտության տեսանկյունից ադրբեջանական հեռուստատեսությամբ իրականացվող քարոզչությունը պահանջում է պատշաճ ուշադրություն և առավել խոր ու գիտական ուսումնասիրության կարիք ունի:

---

[16] http://www.mct.gov.az/?/ru/azerbaijan/1999/16
[17] http://www.day.az/news/hitech/149378.html